


Փաստ. անվանումը	ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԾՄ-09-01
Հաստատման ամսաթիվը	04/10/2011
Արձանագրության N	02/11-12
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ <i>Ավետիսյան</i>
Մշակող	Որակի ապահովման կենտրոն
Ներդրման/իրականացման պատասխանատու	Որակի ապահովման կենտրոն





## Բովանդակություն

1. ՓԱՍՏԱԹՂԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	2
3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	4
4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.....	4
5. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ.....	5
6. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ.....	5

## **2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 2.1. Ուսանողների կողմից դասախոսների գնահատման ձևաչափը հանդիասում է դասախոսի կողմից ստեղծած դասընթացը և կրթական միջավայրը ուսանողների տեսանկյունից վերլուծելու և գնահատելու միջոց, ինչպես նաև դասախոսի կրթական գործունեության բարելավմանը խոչընդոտող գործոնները բացահայտելու հնարավորություն: Գնահատումն իրականացվում է դասախոսի և կրթական միջավայրի, ինչպես նաև դասընթացի գնահատման քարտերի միջոցով:
- 2.2. Ուսանողների կողմից ԵՄՀ դասախոսների գործունեության գնահատումն իրականացվում է ԵՄՀ կանոնադրության և դասախոսական կազմի գործունեության գնահատման կարգի համաձայն:
- 2.3. Ուսանողների կողմից ԵՄՀ դասախոսների գնահատման կարգը հաստատում և դրա մեջ փոփոխություններ ու լրացումներ է կատարում ԵՄՀ գիտական խորհուրդը որակի ապահովման կենտրոնի հետ համատեղ: Գնահատումն իրականացվում է համաձայն պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման և հեղելավճարի սահմանման կանոնակարգի (այս գնահատումից են գոյանում դասախոսի մեթոդական պատրաստվածությունը տրվող մինչև 25 % միավորները):

## **3. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

- 3.1. Գնահատման իրականացման նպատակն է՝
  - նպաստել ուսանողներ-դասախոս կրթական համագործակցությանը,
  - խթանել դասախոսի մասնագիտական աճը՝ առկա բացթողումները ճանաչելու միջոցով,
  - շարունակաբար կատարելագործել ԵՄՀ պրոֆեսորադասախոսական աշխատանքների որակը:
- 3.2. Գնահատման կանոնավոր կիրառումը թույլ կտա զարգացնել դասախոսի մասնագիտական պատրաստվածության մակարդակը, նրա մասնագիտական գործունեության որակի բարելավումը՝ բարձրացնելով ուսանողների պատասխանատվությունը կրթական գործընթացի նկատմամբ:

## **4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

- 4.1. Գնահատումը ներառում է չափանիշներ, որոնք հնարավորինս վերհանում են դասախոսի մասնագիտական պատրաստվածության ուսանողական ընկալումը: Այդ չափանիշներն են՝
  - դասախոսի կողմից առարկայական ծրագրի ներկայացումն ու իրականացումը,
  - դասախոսի կողմից կիրառվող գնահատման մեխանիզմները,
  - դասախոսի կողմից մատուցվող նյութի բովանդակությունը,

- ուսանողների կողմից դասախոսի մատուցած նյութին արձագանքելու հնարավորությունը,
- դասախոսի՝ դասավանդման հմտությունը,
- դասախոսի պարտաճանաչությունը,

**5. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ**

- 5.1. Գնահատումն իրականացվում է յուրաքանչյուր դասընթացի ավարտից անմիջապես հետո, ամփոփիչ քննությունից հետո:
- 5.2. Գնահատումն իրականացվում է դասախոսի ինքնագնահատումից հետո:
- 5.3. Գնահատման ընթացքում ուսանողներն իրենց սուբյեկտիվ կարծիքի հիման վրա գնահատում են դասախոսի կողմից ստեղծած կրթական միջավայրն ու դասընթացը:
- 5.4. Գնահատումն իրականացվում է ուսանողական կուրսում՝ խմբային հարցաթերթիկային հարցման ձևաչափով, պահպանելով խմբային հարցաթերթիկային հարցման կանոնները:
- 5.5. Գնահատման տվյալների գաղտնիությունը և անանությունը վերահսկվում է ԵՄՀ որակի ապահովման կենտրոնի կողմից:

**6. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ**

- 6.1. Գնահատման արդյունքները վերլուծության են ենթարկվում որակի ապահովման կենտրոնի կողմից:
- 6.2. Գնահատման արդյունքները պահպանվում են որակի ապահովման կենտրոնում: Գնահատման անհատական արդյունքները հրապարակվում են միայն տվյալ դասախոսի հետ անհատական հարցազրույցի շրջանակներում, որին մասնակցում են հիմնական վարչական աշխատակիցները, սակայն գնահատման տվյալները ընդհանրացված կարգով կարող են դառնալ խմբային քննարկման առարկա՝ նպատակ ունենալով հզորացնելու դասախոսների մասնագիտական կարողությունները: